

04 AUG 2010

633
u-50 պ. Վ. ՍԻՄԵՆՈՎՍԿԻ

1006
29026
ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՐՈՍ—ՌԵԶՄԵՐՍԻՏԻՆ
ԳԻՐԵՎԱՆ

1934

1905 80A 40

31 JUL 2013

Թարգմանել է Գ. Վրոկանյան, պատ. խմբագիր՝ Պ.
Աթայան, տեխ. խմբագիր՝ Գ. Զենյան, սրբ. Հ.
Մանուկյան:

Հանձնված է արտադրության 27/II 1934
Ստորագրված է տպագրելու 10/IV 1934

Գլավ. № 8463 (բ), հրատ. № 2897, պատվեր 474,
տիրաժ 2000, Պետհրատի տպարան Ցերեքո:

Վ. Ա. ՄԻՄԱՆՈՎՍԿԻ — դիտողության ծառայություն: Գրքի նպատակն է կրթության հրամատարներին, հենցիկ դպրոցների ուսանողներին և դիտողի պաշտոնի համար պատրաստվող կարմիր բանակայիններին ծառայելու իրեն հուշատետր: Ժամանակակից մարտադաշտը դիտելու բարդությունը հարկադրել է ստեղծել դիտողների առանձին կադր, նրանց հատուկ պատրաստություն տալ և սովորեցնել, թե ինչպես պետք է ճաշակելով մարտի մոլորակը հեղինակի նպատակն է՝ այս դրքով կուժ վերլուծության յենթարկել ժամանակակից մարտում դիտողի ամբողջ աշխատանքը և պատրաստվողին ցույց տալ մարտի զանազան պայմաններում դիտողության խնդիրների լավագույն լուծման դործնական ուղիները:

I ԻՆՁԻ ՀԱՄԱՐ Ե ՄԱՐՏՈՒՄ ԴԻՏՈՂ ՆՇԱՆԱԿՎՈՒՄ
ՅԵՎ ԻՆՁՊԵՍ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ

Յեթե մենք այսօրվա մարտադաշտը դիտենք, նա
իր ամալությամբ մեզ կղարմացնի: Պաշտպանական
հաղուստ հազած մարտիկները կպչում են դետնին,
մարտակարգերը մասնատված են մինչև իրենց վերջին
հնարավորությունը: Մարտադաշտը դատարկ եւ Մի-
միայն հողի հսկայական մութ սյուները հրետանային
արկերի պայթյուններից չերբեմն չերկինք են բարձրա-
նում և գնդացրային հերթերի վոստոսությունները (ռի-
կոշետները) մանր փոշի յեն բարձրացնում: Գնդացրի-
ներ շատ կան: Նրանք թագնված են խրամատներում,
ձորակներում, արկերից առաջացած ձագարներում և
տեղի զանազան ծալքերում: Նրանք լավ քողարկված
են, իրենք անտեսանելի լեն և անդգուշ մարտիկների
համար մահաբեր:

Բազմաթիվ որինակներ կարելի չեն բերել, յերբ 1—2
ալդայիսի «անտեսանելի» գնդացրեր կանգնեցրել են
ամբողջ գումարտակի հարձակումը, մարտիկներին
կպցրել են դետնին և չեն թողել մի քայլ անգամ տ-
աջ շարժվել:

Ալդայիսի դեպքերում հետևակը դիմում ե հրետա-
նու ոգնությանը, սակայն չի կարող ճշտորեն ցույց
տալ աչն տեղը, վորտեղ կանգնած են այդ անտեսա-

նելի գնդացիները: Հրետանին սկսում է իր կրակով մի ամբողջ շրջան շոշափել, և այդ գնդացիներին լռեցնելու համար ահագին ժամանակ և շատ արկեր և վատնում, իսկ հետևակը շարունակում է զոհեր տալ: Շատ դեպքերում այդպիսի «անտեսանելի» հակառակորդի համար մեծ մասամբ բավական են լինում արձակված 3-4 հաջող արկը կամ նույնիսկ գնդացրային դիպուկ մահը հերթերը, վորպեսզի կարելի լինի նրան շարքից դուրս բերել կամ ստիպել նրան լռելու:

Հարկավոր է միմիայն նրան ժամանակին տեսնել: Իսկ դեռ համար անհրաժեշտ և շարունակ ուշադրություն դարձնել մարտադաշտը և արագորեն դառնել այն հակառակորդին, վորը տվյալ բոլորին մեկ խանդավորում է:

Դասակի հրամատարն ու վաշտի հրամատարը ղեկավարում են իրենց մասի մարտը, այսինքն մարտիկներին ուղղություն են տալիս, ցույց են տալիս, թե գնդացիներն ու հրետանին ուր պետք է կրակեն, հետևում են, վոր թիկունքից փամփուշտները ժամանակին մատակարարվեն, և ավագ հրամատարին ղեկուցում են իրենց գործողությունների մասին: Նրանք հնարավորությունն չունեն մարտադաշտն անընդհատ դիտելու: Բացի դրանից, այն շրջանը, վորը զբաղվում է վաշտը, այնքան մեծ է, վոր մի մարդու ուժից վեր է նրան մանրամասն դիտողություն չենթարկելու:

Դրա համար վաշտի կազմից նշանակվում են հատուկ կարմիր բանակալիներ, վորոնց խնդիրն է՝ դիտել մարտադաշտը, հաշտաբերել հակառակորդին և այդ մասին զեկուցել իրենց հրամատարին: Այդպիսի մարտիկը կոչվում է դիսոլ: Դիտողի աշխատանքն ա-

վելի պատասխանատու, ավելի վտանգավոր է և պահաս պատվավոր աշխատանք է, քան նրանց աշխատանքը, ովքեր անմիջապես մարտ են մղում: Նա նույնպես մարտ է մղում, սակայն մարտը մղում է, ինչպես ասում են, փչեքով:


Իր վաշտի ամբողջ շրջանը մեկ դիտողն է վիճակի է մանրամասն զննելու, — շրջանը չափազանց ընդարձակ է: Այդ պատճառով կարիք է լինում նշանակել մի քանի մարդ: Յուրաքանչյուր դիտող ստանում է դիտողություն տեղամաս, վորի համար և նա պատասխանատու է: Այդ տեղամասը կոչվում է դիսոլայնի սեկտոր: Դիտողություն սեկտորի լայնությունը կախված է տեղանքից: Յեթե տեղանքը բաց է և հարթ, սեկտորը լինում է ավելի լայն, չեթե տեղանքը կտրված է, ծածկված միջանտառակներով, մացառներով, կտրտված է ձորակներով և հեղեղատներով, սեկտորը լինում է ավելի նեղ: Միջին հաշվով սեկտորի լայնությունը տատանվում է 250 և 400 մետրի միջև: Մի քանի դիտողներ, վորոնք իրենց դիտողությունները ընդգրկում են վաշտի կամ գումարտակի մի ամբողջ շրջան, կազմում են դիսոլայնի ծառայությունը:

Դիտողության սեկտորը տրվում է տեղական առարկաներով: Որինակ. «դեպի աջ — մինչև բարձունքի վրայի առանձին ծառը, դեպի ձախ — մինչև խուտորը:

1-ին նկարում ցույց է տրված, թե ինչպես են տեղավորվում դիտողության ընդհանուր սխեմայի մեջ մտնող առանձին դիտողները:

Մեկ դիտողի սեկտորն ընդգրկում է մյուս դիտողի սեկտորի մի մասը, ինչպես ասում են սահմանները միմյանց ծածկում են: Այդպիսով ստացվում է դիտողություն մի անընդհատ շերտ:

Դիտողութեան ծառայութիւնը զորամասի աչքն եւ Ով մարտադաշտն ավելի լավ ե տեսնում, նա մարտի տեղն եւ Նա կարող ե իր կրակն ավելի արագ կերպով ուղղել դեպի հակառակորդը, իր մարտիկներին ավելի լավ ուղղութիւն տալ և հակառակորդի կրակից նրանց ավելի լավ պաշտպանել։ Ուրեմն նա ավելի արագ



Նկ. 1

և քիչ կորուստներով կկատարի իր խնդիրը։ Այն դորամասը, վոր դիտողութիւնն չի կազմակերպել, կույր եւ Նա չի տեսնում, թե ով ե իրեն հարվածում, չի կարող գտնել նրան, վորին ինքը պետք ե հարվածի, յերկար ժամանակ մի տեղ կանդնած ե մնում, հակառակորդի կրակից մեծամեծ և իրուր զոհեր ե կրում

և հաճախ ել չի կարողանում իր խնդիրը կատարել, վորովհետեւ հակառակորդին չի տեսնում։

Այժմ հասկանալի չե, թե մարտում ինչպիսի մեծ և պատասխանատու խնդիր ե զրվում դիտողի վրա։ Յեկեք քննութեան առնենք, թե ինչ պետք ե իմանա դիտողը, վորպեսզի պատվով կատարի այդ պատասխանատու խնդիրը։

II ԻՆՉ ՊԵՏՔ Ե ՏԵՄՆԵԼ ՄԱՐՏՈՒՄ

Մենք ասացինք, վոր դիտողը պետք ե հակառակորդին վորոնի, այն հակառակորդին, վորն իր զորամասի համար կարևոր ե։ Մարտի դաճազան պայմաններում նպատակներն ունենում են տարբեր կարևորութիւն։ Հարձակման ժամանակ կարևոր են այլ նպատակներ, պաշտպանութեան ժամանակ՝ այլ, հետախուզութեան ժամանակ՝ մի յերրորդ տեսակի նպատակներ։ Սակայն բոլոր դեպքերում ել դա հակառակորդն ե՝ իր տեխնիկայով և իր զինքով։

Այսպես, հետախուզութեան յեղ պահպանութեան ժամանակ թե տեղում և թե չեղած մենք դործ ենք ունենալու հակառակորդի հետ, վորը մեզ կմոտենա, կսկսի աստիճանաբար բացազատվել և մեզ հետ կուվել։ Մեր դասակը կամ վաշտը կսկսի կուվել, վորպեսզի հակառակորդի ուժին, նրա կազմին ծանոթանա, գիտենա թե նա ուր ե շարժվում, այսինքն տեղեկութիւններ հավաքի նրա ավելի խոշոր զորամասերի վերաբերյալ, վորոնք հանգստանում են կամ մեր վաշտի պաշտպանութեան տակ շարժվում են։ Մինչև մեր զորամասերի հասնելը վաշտը հակառակորդին կզսպի և նրան կհե-

տախտուղի, իսկ չեքք զորամասերը մոտենան, նրանք մեր տեղեկությունների հիման վրա կսկսեն հակառակորդին հարվածել: Ուրեմն զիտողը պետք է հակառակորդի խմբավորման, նրա ուժերի և դիտավորությունների վերաբերյալ, վորքան հնարավոր է, շատ տեղեկություններ հավաքել: Այստեղ մենք կարող ենք հակառակորդին դիտել հեռվից, չեքք նա մեղ մոտենում է զորասյուներով, կարող ենք հաշվել զորասյունների քանակը և թե ինչպիսի զորքերից (հետևակ, հեծելազոր, հրետանի, ավտոմեքենաներ հետեակով) են բաղկացած զորասյունները, ինչ չերկարություն ունեն, ուր են թեքվում, վորտեղ են կանգ առել, վորտեղից են սկսում հարձակվել, և հակառակորդի թվական մեծությունը, վորտեղ են դասավորվում զնդացիները և քանի հատ են, հրետանին զորասյունից մեր է գնում, զորասյան մեջ տանկեր կան և նրանք մեր են շարժվում: Ամառվա չոր օրին, մանավանդ քամի լինելու դեպքում, մենք կարող ենք հակառակորդի զորասյան շարժումը դիտել աչք փողով, վոր իրենց շարժվելու ժամանակ զորքերը բարձրացնում են, կարող ենք պարզել, թե զորասյուններն ուր են թեքվում, նրանք վորտեղ կանգ առան և բարձրացած փողու բնույթով իմանալ զորասյան կազմը:

Հակառակորդի պաշտպանությունը նետախուզելիս առաջավոր գումարտակի կազմում գործելիս և հարձակման ժամանակ անհրաժեշտ է հայտնաբերել հաստոցավոր և թեթև զնդացիների տեղերը, զնդացիային բները, խրամատները, գումարտակի հրետանու տեղերը, խրամուղիները, լարափակոցները, արգելաբանները, անցկալները, փոսերը, զնդակոծման համար մաքրված

տեղերը, դաշուճային հիմնոթները, զնդացիներն ու հակատանկային խոչընդոտները:

Պաշտպանության ժամանակ անհրաժեշտ է աչալըրջորեն հետևել հակառակորդի բոլոր տեղափոխություններին՝ դեպի ուր են վազվազք կատարում նրա զորամասերը, վորտեղ են դրվում և ուր են տեղաշարժվում հաստոցավոր և թեթև զնդացիները, վորտեղ են նկատվում հակառակորդի կուտակում, վորտեղից է կրակում գումարտակի և զնդի հրետանին, նախապես պարզել տանկերի մոտենալը և աչք տեղերը, վորտեղ նրանք կենտրոնանում են:

Յիվ մարտի բոլոր դեպքերում վորոշել հրամասարների յիվ դիտողների տեղերը: Այդ տեղերը վորոշելուց հետո, մենք կարող ենք նրանց վրա կենտրոնացնել մեր կրակը, նրանց վոչնչացնել և հակառակորդի զորամասերին ղեկավարելուց և «աչքերից» զրկել: Դրանից հետո իր ղեկավարությունը կորցրած և մարտադաշտում վոչինչ չտեսնող հակառակորդի զորամասի հետ հաշիվ տեսնելը մեղ համար հեշտ կլինի:

Բացի զիտողության աչք հիմնական պարտականություններից՝ զիտողների վրա կարող են խնդիրներ դրվել զիտելու իրենց և հարևան զորամասերի գործողությունները: Դիտողը պետք է վորոշի, թե իր զորամասերը յերբ են դուրս գալու վորոշված բնագծերը, չեքք են գրոհի նետվելու և արդյոք նրանք հաջող կերպով են առաջ շարժվում:

Հարևանների գործողությունները դիտելը չերբենն միակ միջոց է հանդիսանում նրանց մասին տեղեկություններ ստանալու, քանի վոր կապի մշուս միջոցներն աչք տեղեկությունները կամ չափազանց դանդաղ

են հաղորդում կամ թե բոլորովին հրաժարվում են հաղորդելուց:

Իսկ հարևանների գործողութիւններին մասին իմանալը յուրաքանչյուր գործամասի համար անհրաժեշտ է, վորովհետեւ նա իր գործողութիւնները կապում է այդ հարևանների հետ:

Հարձակման ժամանակ մենք պետք է գիտենանք, թե մեր հարևանը վորքան հաջող է շարժվում. կարող է պատահել, վոր հակառակորդը նրա հարձակումը կանգնեցրել է, կարող է պատահել, վոր մենք պետք է նրան ոգնենք, կամ թե նա առաջ է շարժվել և մենք պետք է մեր շարժումն ուժեղացնենք:


Պաշտպանութեան ժամանակ մեզ համար կարեւոր է իմանալ, թե մեր հարևանը վորքան հաջող է յետ շարժում հակառակորդի գրոհները: Յեթի հակառակորդը ներխուժի հարևանի դասավորման շրջանը, նա կսպառնա նաև մեզ, ուստի մենք իսկույն և լեթ պետք է գիտենանք, թե հակառակորդը հարևանին նեղն է գցել, վորպեսզի կարողանանք հարևանին կրակով ոգնել և մեր թեի համար պաշտպանութիւն կազմակերպել:

III ԻՆՉ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐՈՎ ԿԱՐԵԼԻ ՅԵ ՎՈՐՈՇԵԼ ՀԱԿԱՌԱԿՈՐԴԻ ԶՈՐԱՄԱՍԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այժմ լեկեք քննենք այն հարցը, թե ինչպե՞ս կարելի է պարզել՝ ինչ է անում հակառակորդը, ինչ հատկանիշներով կարելի է նրան գտնել մարտադաշտում: Չէ՞ վոր մենք հենց սկզբում ասացինք, վոր մարտադաշտում բոլոր գործամասերն աշխատում են թագնալի, քողարկվել և կաշկել գետնին:

Յեթի մենք մարտադաշտ դուրս բերենք մի մարդու, վորը մարտական գործողութիւններին մասին վորչինչ չգիտէ, նա մարտադաշտում վորչինչ չի նկատի: Այն մարտիկը, վոր գիտելու պատրաստութիւն չի ստացել, վորեւե բան կնկատի, սակայն այդ դեռ բավական չէ, վորպեսզի այդ գիտողութիւններով մենք հաջող բարտ մղենք:

Դիտողն այնպե՞ս պետք է լավ մարզված լինի հարկավոր նպատակները հաջող կերպով գտնելուն, վորպեսզի անփորձ աչքի համար ամալի մարտադաշտում արագ կերպով կարողանա հայտաբերել հակառակորդի տեղավորութեան սխտեմը: Այստեղ նրան ոգնութեան



Նկ. 2

են գալիս մի շարք հատկանիշներ, վորոնց թագցնել չի կարող հակառակորդը: Այդ հատկանիշների հիման վրա դիտողը կարող է իր խնդիրը կատարել:

Փորձենք տեսնել, թե իրենցից ինչ են ներկայացնում առանձին նպատակները, Նախ և առաջ պետք է գիտենալ, վոր հակառակորդը կարող է լինել յերեք վիճակում. առաջինը—շարժման մեջ, յերկրորդը—տե-

դավորված է դիրքում, սակայն դեռևս կրակ չի վարում,
և յեբրորդը—չերբ նա կրակ է վարում:

Յուրաքանչյուր անգամ լինում են տարբեր հա-
կանիչներ:

1. Ինչպես ե հայտնաբերվում հասցնելու գնդա-
ցիքը: Ամենից առաջ պետք է գիտենալ, վոր մեր հա-
վանական հակառակորդներից շատերը զինված են Գոչ-
կիսի սխտեմի հաստոցավոր զնդացիքով: Իր արտաքին
տեսքով նա մեր «Մաքսիմից» զգալիորեն տարբեր-
վում է: Ամենից առաջ նա զրված է վոչ թե ակների,
այլ յեռոտանու վրա (նկ. 2) և մարտում նրան վոչ թե
վորեն բանով փոխադրում, այլ ձեռքով են տեղափո-
խում: Ամենից ավելի հեշտ ե զնդացիքը վորոշել շարժ-



Նկ. 3

ման ժամանակ: Նրան 2 մարտիկ ձեռքերով տեղափո-
խում են այնպես, ինչպես պատգարակի վրա դրած:

Յերբ զնդացիքը զրված է դիրքում, նա այնպիսի
մի պատկեր ե ունենում, ինչպես ցույց ե տրված նը-
կար 3-րդում:

Բնորոշ նշանները. զնդացիքին սպասարկում են 3
համար, զնդացիքը վահան չունի, փողը սառեցվում ե
ռդով, այդ պատճառով ել մեծածավալ պատյան չունի:

Գնդացիքը կարող ե զրված լինել քողարկված ձևով,
այնպիսի դիրք գրավել, վորը նրան լավ ծածկի ե
յեթե նա չի կրակում, նրան գտնելը բավականին
դժվար ե: Նրան կարող են մատնել՝ անհաջող փորված
խրամառը, մետաղե մասերի փալլը, համարների շար-
ժումները:

Բաց դիրքերում տեղավորված (թեկուզ ե քողարկ-
ված) կրակող զնդացիքները կարելի չե հայտնաբերել
փողից դուրս թռչող ե արագ կերպով ողում տարած-
վող սպիտակ ծխի հազիվ նկատելի հոսանքով:

Ծածկված դիրքերից կրակող, կամ լավ քողարկված
զնդացիքները կարելի չե հայտնաբերել.

ա) հրաձգության ձայնով ե բ) իր թաքստոցի
կատարին պատահաբար դիպչող վոստոսոյուններով
(ռիկոչեաներով):

Գնդացիքը հրաձգության ձայնով հայտնաբերելու
համար պետք ե վարվել հետևյալ կերպ. գլուխը շուտ
տալ այն ուղղությամբ, վորտեղից հրաձգությունը
լսվում ե, ե չզինված աչքով (այլ ինքն առանց յերկ-
դիտակի) նայելով, հակառակորդի դասավորության
մեջ ուղիղ իր դիմացը նկատել մի կես. ապա յերկ-
դիտակով այդ կեսին նայելով, սպասել ձիգի ձայնին.
յեթե վերջինս լսվի նշանակված կետի աջ կամ ձախ
կողմից, հայացքը տեղափոխել մի այլ կետի վրա այն
ուղղությամբ, վորտեղից հրաձգությունը լսվում ե, ե
նույնպես ուշադրությամբ և պասել ձիգի ձայնին: Այդ
դեպքում առանձնապես կարևոր ե, վոր դիտողն իր
հայացքով աջ ու ձախ չթափառի, այլ համառ ե ուշա-
դիր կերպով նայի նշանակված կետին: Դրանից հետո
յերբ հրաձգության ուղղությունը բավական ճշգրիտ

կերպով կորոշվի (այսինքն, կվերանա այն տպավորութունը, թե ձիգերը նշանակված կետի նկատմամբ մի ուրիշ տեղից են լսվում), պետք է սկսել այդ կետի շրջակայքը մանրամասն զննության լինթարկել կամ թե սկսել քարտեզն ուսումնասիրել (լինթե գնդացիները դրված են ծածկված դիրքում): Հրաձգության ձայնով գնդացիների տեղը վորոշելիս անհրաժեշտ է հիշել և հաշվի առնել, վոր՝

ա) ձայնը կարող է քամին քշել, իսկ

բ) այն գնդացիի ձայնը, վոր կրակում է վոչ թե դիտողի ուղղությամբ, այլ մի ուրիշ կողմի վրա հաճախ թվում է, թե գնդացիը մի այլ տեղ է գտնվում:


Վորոշ դեպքերում գնդացիի տեղը կարելի չէ վորոշել նրա հրաձգության վստոտություններով, ինչպես և գետնի վրա գնդակների թողած հետքերի (ակոսների) ուղղությամբ:

Գնդացիը կարող է դրվել հատուկ սարքավորված բնում. այդ ժամանակ աշխատում են նրան վորոշել այն հրակնատով, վորը ներկայացնում է իրենից մի սև անցք: Կարելի չէ վորոշել նաև այն վորոշով, վորը բարձրացնում է գնդացիը հրակնատից կրակելիս: Յեթե գնդացիը դրված է մացառուտում կամ անտառում, այդ դեպքում դրանք պետք է գնդակոծման համար մաքրվեն:

Դրանց պետք է մաքրել այնպես, վոր գնդացիը մեկ կողմից ունենա լավ գնդակոծ, իսկ մյուս կողմից լինի քողարկված: Գնդացիը պետք է վորոշնել 4-րդ նկարում ցույց տված մաքրված տեղի անկյան գալթի մոտ:

2. Մեր հավանական հակառակորդների մեծ մասն

ունի լերկու սիստեմի բերել զնդացիի՝ Լյուսիսի և Գոչկիսի: Լյուսիսն իրեն մատնում է իր չափազանց հաստ պատյանով: 5-րդ նկարում ցույց է տրված վազելազք կատարող գնդացիը: Գնդացիը տեղավորվում է մեկ մարդ: Այդ մարդուն հրաձգից զանազանիլը շատ հեշտ է թե գնդացիի բնորոշ ձևով, և նրանով, թե հրաձիգն ինչպես է գնդացիը ձեռքում բռնել: Բացի դրանից, քանի վոր գնդացիին սպասարկող համրանքի կազմը



Նկ. 4




Նկ. 5

բաղկացած է 4-5 մարդուց, ձեռքի գնդացիի լետից նկատի կլինի այդ համրանքի շարժումը: Գնդացիը դիրքում տեղավորվում է այնպես, ինչպես ցույց է տրված 6-րդ նկարում:

Կրակող ձեռքի գնդացիը վորոշվում է նույն պատճառներով, ինչ վոր հաստոցավորը: Իր ձգաբանական հատկութուններով նա պետք է տեղավորվի ավելի մոտիկ, անմիջապես առաջավոր դրամասերում: Հար-

ձակման ժամանակ ձեռքի գնդացիներն ավելի հաճախ պետք է փոխի իր դիրքը, քան հաստոցավոր գնդացիները: Այդ պատճառով ել նրան վորոշելը շատ ավելի հեշտ է.

3. Հրամարտական կետերը կարելի է վորոշել նրանց մոտերքում կատարվող մեծ շարժողութչամբ. այդ տեղերն են գալիս և այդ տեղերից հեռանում են լրատարները, այդ տեղերից տրվում են աղդանշաններ, այդ տեղերը հեռախոսներ են անցկացնում, այդ տեղերը շներ են վաղում:



Նկ. 6

4. Դիտակետերն ամենից հաճախ նկատվում են իրենց պարապմունքի մոմենտին: Ամենաբնորոշ նշաններն են՝

ա) վորոշ տեղում յերևացող և նորից անհետացող մարդկանց գլուխները.


բ) մալուխը չկտ տվող կամ նորոգող կապավորները

գ) յերկզկտակի կամ փողակի ապակիների փայլելը և

դ) շրջագլխակի (պերխակուլի) յերևալը:

5. Կարևոր է կարողանալ հակառակորդի սպաներին

զանազաներ: Նրանք ներկայացնում են իրենցից իբրև ձեռնառու և կարևոր նշան: Նրանց ամենից հեշտ կարելի է ճանաչել իրենց բարակ վորտքերով: Մինչդեռ զինվորներն ունեն ավելի լայն տարազի անդրավարտիքներ և վորտքերին՝ փաթաթաններով կիսակոշիկներ. սպաները հագած են լինում նեղ անդրավարտիքներ և յերկարավիզ կոշիկներ, վորով և նրանց վորտքերը հեռվից ավելի բարակ են յերևում: Բացի դրանից, սպաները հրացան չունեն, վորի փոխարեն նրանց ձեռքում հաճախակի կարելի է նկատել քարտեղ (վորը հեռվից սպիտակին է տուլիս):



Նկ. 7

Ամենից հեշտ է նրանց նկատել վաղեվազք կատարելիս: Կարևոր է պարզել ալն տեղը, վորտեղ նրանք պառկած են:

6. Գումարտակային հրետանու հրամարտը շարժվելիս նկատելը հեշտ է: Նրան գլորում են մարդիկ և նա ներկայացնում է իրենից մի խումբ, ինչպես պատկերացված է Դ-րդ նկարում:

Դիրքում տեղավորված Թնդանոթն իրեն մատնում
և ձայնով, կրակի փայլով, փռոշով և վահանի վերևի
յեղրով, վորը ծածկարանից վեր և բարձրացած:

Ավելի դժվար և նկատել դաշույնային կրակի հա-
մար տեղավորված գումարտակային և գնդային հրե-
տանու հրանոթը: Սա խնամքով քողարկված և և դա-
րանամուտ լեղած սպասում և իր դոհին: Նա սպասում
և իր նշանին, վորպեսզի նրան գնդակոծի կիպ մոտիկից:
Այգպիսի հրանոթը մեր տանկերի համար մեծ վտանգ
և ներկայացնում:

Այգպիսի հրանոթը գտնելու համար դիտողից մեծ
ուշադրություն և աշարջություն և պահանջվում:

Իսկ թե նա մեր զորամասերի համար վորքան վտան-
գավոր և, վորքան կարևոր և նրան իր ժամանակին
հայտնաբերել, կարելի չե դատել նրանից, վոր լեր-
քեմն հատուկ դիտողներ են նշանակվում, վորոնց ամ-
բողջ խնդիրն և բացառապես այդ հրանոթները գտնել:

Ամենից առաջ պետք և գիտենալ, թե վորտեղ պետք
և վորոնեկ այդ հրանոթը: Նրան պետք և վորոնեկ ծածկ-
ված տեղերում, սակայն միաժամանակ նաև այնպիսի
տեղերում, վորտեղից հարմար և կրակել. որինակ՝ ան-
տառի, մացառուտի ծալքին, այգու մոտ, առուներում,
առանձին տների մոտերքը, գյուղերի ծայրամասերում:

Նրան իր անգգուշ շարժողությունը մատնել կարող
և հրանոթային համրանքը: Յեթե այգպիսի տեղում
դուք վորևե շարժում եք նկատում և այգտեղից կրակ
տեղի չի ունենում և հակառակորդի զորամասերն այգ-
պիսի տեղին մոտիկ չգրաված փոքրիկ շերտ են թող-
նում, այգպիսի դեպքում կարելի չե չենթադրել, վոր
այգտեղ հակառակակային հրանոթ կա:

7. Տանկերն իրենց գոյությունը մատնում են մո-
տորի աղմուկով և թրթրավոր անիմների չրխկոցով:
Զգոն դիտողն այդ ձայնով կարող և վորոշել այն տե-
ղը, վորտեղ տանկերը գրոհից առաջ հավաքվում են:
Նկատել այն տանկերը, յերբ նրանք գրոհի չեն շարժ-
վում, դժվարություն չի ներկայացնում, վորովհետև
շարժվելիս անհնարին և թղարկվել:

Սակայն շատ ավելի կարևոր և պարզել այն տեղը,
ուր նրանք հավաքվում են գրոհելու համար, վորպեսզի
մեր հրետանային կրակով կարողանանք նրանց քայ-
քայել, խանգարել նրանց հավաքվելու և մեղ գրոհելու:

8. Պաշտպանվող հակառակորդին դիտելու ժամա-
նակ անհրաժեշտ և պարզել, թե վորտեղ են նրա
խումուսները, խումուղիները, արհեստակա արգելքները
(արգելանտառները, փոսերը, լարափակոցները և այլն):

Սրամատները, խանդակները, փոսերը, խումու-
ղիները հեշտությունը հայտնաբերել կարելի չե դուք
թափված հողով, Յեթե հողը պատած և ճիմով, շոգ
որին ճիմն սկսում և թառամել և իր գույնով ընդհա-
նուր ֆոնից զանազանվում և: Պատվարի ձևն ուշադրու-
թյամբ ուսումնասիրելով, կարելի չե խրամատի բնույ-
թը պարզել: Բացի դրանից, խրամատի մոտի գետինը
միշտ ավելի շատ և տրորված լինում, և ուշադրությամբ
դիտելիս կարելի չե խրամատի տեղը ճիշտ վորոշել:

Յեթե խրամատից հրաձգություն և տեղի ունենում,
այդ խրամատը վորոշելն ավելի հեշտ և հրաձգների
գլուխներով, դուքս ցցված զենքով և ձիգերից առա-
ջացած փռու փոքրիկ ամպով:

Լարափակոցը վորոշելն ավելի դժվար և, վորովհետև
նա միշտ ել բաց տեղերում և բարձր ցցերի վրա ձգված

չի լինում: Շատ հաճախ նա գցված է լինում առանց
ցցերի բարձր խոտի մեջ, կախվում է առուների մեջ
փոքր ցցերի վրա: Արև որին կարելի չե նրան գտնել
արևից փայլելով: Թուխպ որին նրան նույնպես կարելի
չե նկատել, քանի վոր նա չերևում է իբրև գորշ ցանց:

9. Չոր յեղանակին զորապետ մոտենալը կարելի չե
հեռվից նկատել նրա բարձրացրած փողիով: Հետևակի
բարձրացրած փողին լինում է ցածր և թանձր, հեծե-
լազորը, քալելով շարժվելիս, ավելի բարձր փողի չե բարձ-
րանում, վարդով շարժվելիս՝ ել ավելի բարձր: Ըստ վո-
րում նրա վերևի մասը շատ ավելի նոսր է լինում, իսկ
առջևից փողու սյունը մի փոքր չիտ է թեքված: Ավ-
տոմոբիլներն առաջացնում են ցածր, նոսր և առջևի
կողմից խիստ թեքված փողի, ըստ վորում փողին ա-
րագորեն առաջ է շարժվում: Փողու սյան չերկարու-
թյամբ կարելի չե վորոշել զորասւյան չերկարութունը:
Յեթե զորասւյունը դիտողին չերևում է, կարելի չե նրա
կազմը վորոշել հետևյալ նշաններով: հետևակն ունի
չերկար, միասլաղաղ գորշ ոձի նմանութուն. հեծեա-
զորի զորասւյունը լինում է ավելի բարձր, ըստ վորում
զորասւյան վերևի մասը մի տեսակ ատամնավոր ձև է
ունենում (ձիավորը նստած է ձիու վրա): Հրետանին
զորասւյան մեջ հեշտ է նկատել զորասւյունների միջև
յեղած արանքներով, վորոնք լցված են լինում հրետա-
նային լծվածքներով: Ավտոզորասւյունը բնորոշ է նը-
րանով, վոր բաղկացած է առանձին մեքենաներից և
էրազ է շարժվում:

Ահա այն հիմնական հատկանիշները, վորոնցով
դիտողը չուրաքանչյուր մարտ մղող զորամասի համար
կարող է վորոշել հակառակորդի ամենակարևոր, ամե-
նահետաքրքիր նշանները:

Ի հարկե դոյություն ունեն նաև շատ հատկանիշ-
ներ, վորոնցով կարելի չե վորոշել նրանց տեղերը:

Քննության առնելով քողարկահան անող այդ ա-
մենագլխավոր հատկանիշները, անհրաժեշտ է ընդգծել,
վոր առաջին հայացքից աննշան առանձին հատկանիշ-
ներով կարելի չե գտնել շատ կարևոր նշաններ: Միայն
թե պետք է կարողանալ այնպես անել, վոր ուշադրու-
թյունից վռչինչ չվերպի: Կարելի չե բերել այսպիսի
մի որինակ: Իմպերիալիստական պատերազմի ժամա-
նակ արևմտյան ճակատում դիտողը նկատել է, վոր
հակառակորդի խրամատներից մեկում միևնույն տե-
ղում կատու չե չերևան դալիս: Նա սկսել է ուշադրու-
թյամբ այդ տեղը դիտել և դարձյալ մի շարք մանր
հատկանիշներ է գտել, վորոնք նրան թելադրել են,
թե այդտեղ ուղղակի հակառակորդի սպաներ են տե-
ղավորված: Այդ տվյալները հազորդվել են հրետանուն,
վորն իր կրակով այդ խրամատն ավերել է: Հետագայում
պարզվել է, վոր այդտեղ տեղավորված է յեղել հա-
կառակորդի հրամատարական կետը:

Դիտողը պետք է հիշի, վոր փայլն ու շարժումն ա-
մենից լավ են ոգնում վորոշելու այն տեղը, ուր զբա-
նվում է հակառակորդը, վորին մենք վորոնում ենք:
Իսկ ուշադրությամբ քննելով այդ տեղը, դիտողը կարող
է այդ հակառակորդին գտնել:

Այժմ խոսենք այն մասին, թե դիտողն ինչպես է
մարտում տեղավորվում:

IV ԻՆՉՊԵՍ ԸՆՏՐԵԼ, ՍԱՐՔԱՎՈՐԵԼ ՅԵՎ ՔՈՂԱՐ- ԿԵԼ ԴԻՏԱԿԵՏԸ

Այն տեղը, վորտեղ տեղավորվում է դիտողը, վոր-

տեղից նա դիտողութուն ե կատարում, կոչվում ե դիտակէս (հետադայում մենք կարճորեն կանվանենք ԴԿ):

Դիտողության հաջողութունը մեծ մասամբ կախված ե նրանից, թե դիտողն ինչպես և վորտեղ ե տեղավորված: Իր համար ԴԿ ընտրելիս, դիտողը պետք ե հիշի 3 հիմնական պայման:

1. Յես իմ կետից պետք ե տեսնեմ իմ ամբողջ դիտողության սեկտորը:

2. Հակառակորդն ինձ չպետք ե նկատի, վորով-




Նկ. 8

հետև լեթենա ինձ նկատի, թույլ չի տա ինձ հանգիստ կերպով դիտելու, և լես իմ խնդիրը կատարել չեմ կարող:

3. Յես պետք ե ծածուկ կերպով մոտենամ իմ կետին և աշտեղից աննկատելի կերպով հեռանամ, աշտինքն դեպի ԴԿ-ը պետք ե լինի ծածուկ ճանապարհ:

Տեղանքում դոյություն չունեն հատուկ տեղեր, վորտեղ դիտողը կարողանա տեղավորվել: Նա կարող ե իր ԴԿ ը պատրաստել ամեն տեղ, միայն թե աչդտեղ պահպանվեն աչդ 3 պայմանները:

Մենք տարբերում ենք 2 տեսակի ԴԿ: Առաջին ԴԿ-ն պատրաստում ե ինքը դիտողը: Հրամատարը նրան




Նկ. 9

միայն ցույց ե տալիս աչն ընդհանուր տեղը, վորտեղ պետք ե տեղավորվել (բարձունքը, ցանկապատը, մացառուտի ծայրը, անտառի անկյունը և այլն), և ցույց ե տալիս դիտողության սեկտորը: Այն ճիշտ տեղը,

վորտեղ պետք է տեղավորվել, ընտրում է ինքը դիտողը:

Յերկրորդ տեսակի ԴԿ-ն այն ԴԿ ն է, վոր սարքավորում են սապյունները: Մովորաբար այդ կետը լինում է լավ քողարկված, հակառակորդի հրացանային-գնդացրային և չերբեմն ել հրետանային կրակից պաշտպանված. միայն թե այդպիսի կետերը սովորաբար սար-



Նկ. 10

քավորված են լինում այն ժամանակ, չերբ զորամասը մի տեղում քիչ թե շատ չերկար է կանգնում, այսինքն պաշտպանողական գործողության պայմաններում: Մո վորաբար դրանք քողարկվում են տեղական զանազան

առարկաներով (Նկ. 8, 9, 10, 11) (քար, կոճղ, գերեզման) կամ թե պատրաստվում են բլինդաթի ձևով, վորն ունենում է նրա միջով դիտելու համար հրակնատ (Նկ. 12):

Մենք ավելի մանրամասն կերպով կքննենք այն հարցը, թե ինչպես պետք է դիտողն ինքն իր համար արագ կերպով ԴԿ ընտրի և հարմարեցնի: Յեթե այդ բանը կարողանա ինքն անել, ապա ուրեմն միշտ ել կարող է ուրիշների պատրաստած կետից դիտել: ԴԿ կարելի է ընտրել ամեն տեղ: Միայն թե հարկավոր է այնպես հարմարվել, վորպեսզի կարելի լինի պահպանել այն 3 պայմանները, վորոնց մասին մենք արդեն ասացինք:



Նկ. 11

Յեթե մենք ԴԿ-ը գրավում ենք ծառի վրա, պետք է ընտրենք ավելի խիտ և այնպիսի ծառ, վորի յետևում նույնպես ծառեր լինեն: Այդ դեպքում դիտողը յերկնքի ֆոնի վրա աչքի չի ընկնի: Դիտելիս, պետք է ընդհուպ կաշիլ ծառի բնին կամ նույնիսկ պտուկի հաստ ձյուղի վրա, ծառի հետ, վորքան կարելի յե, ավելի շատ ձուլվելու համար:


Յեթե ծառը չափազանց հաստ է և դժվար է նրա վրա բարձրանալ, կարելի է մի ձող կտրել և հենելով

նրան ծառին, հեշտությամբ հասնել առաջին ճյուղին (նկ. 13):

Ծառն ընտրելիս, մանավանդ ամուսն սկզբին, խուսափեցեք թռչունների բներ ունեցող ծառերից:

Վահանք փակում և մուտքը, ներկված և տեղանքի դուրսով: Վարագույր, վորպեսզի հրակնատը հակառակորդի կողմից լուսավոր ֆոնի վրա չպատկերավորվի:

Թռչուններն իրենց բները պաշտպանելու համար սկսում են իրար խառնված, ծղրտալով պտույտներ գործել ծառի մոտերքում և կարող են ձեր տեղը հեշտությամբ մատնել հակառակորդին:




Նկ. 12

Յեթե դուք դիտում եք առանձին ծառի լեռնից, ավելի լավ և պառկել գետնի վրա և արմատի աջ կողմից դիտել: Կանգնած դեպքում դուք ակամայից ձեր մարմինը ծառի յետևից առաջ եք տալիս և դրանով ձեր տեղը հակառակորդին մատնում եք (նկ. 14):

Մացառի յետևից ավելի լավ և դիտել պառկած դրությամբ, զգուշությամբ զլուխն արմատների մոտից հանելով կարելի է կտրտել մի քանի ճյուղ և դրանց


բռնել յերեսի առջևը կամ իր առջևում տնկել գետնի մեջ, վորպեսզի կարելի լինի ավելի լավ քողարկվել: Պետք է խուսափել խիստ շարժումներ անելուց, վորովհետև այդ շարժումները կհաղորդվեն մացառին, և լավ դիտող տերևների շարժումով կարող է ձեր տեղն իմանալ (նկ. 15):



Նկ. 13

Կարելի է դիտել նաև միտնգաւալայն բաց տեղից, որին նախ վորևե բարձունքի կատարից: Դրա համար պետք է ծածուկ կերպով մոտենալ բարձունքին և թշնամուն հակառակ կողմից բարձրանալ նրա վրա: Գազաթին դեռ մի փոքր հասած, պետք է նշել այն տեղը, վոր

տեղից դուր ղիտելու յեք: Ավելի լավ է այն տեղը, վորի կատարը անհարթ է կամ վորը պատած է բարձր խոտով: Պետք է պառկել գետնին և սողալով, առանց գլուխը բարձրացնելու, դուրս գալ նշված տեղը և ըզ-գուշությամբ գլուխը բարձրացնել: Դիտելիս պառկել



Նկ. 14

անշարժ: Դեմքին հող քսել, վորովհետև սպիտակ գու-նը հեռվից չերևամ է և գլխարկը հանել (Նկ. 16):



Նկ. 15

Առվից, փոսից կամ արկից տուաչացած ձագարից դիտելն ավելի լավ է այնտեղ, ուր հակառակ չեղրն


ավելի բարձր է, քանի վոր ձեր գլուխը չերկնքի ֆոնի վրա պատկերավորվել չի կարող, և հակառակորդը ձեզ ավելի դժվարությամբ կնկատի (Նկ. 17):

Կոնդի, կոեսի, բմբի կամ ֆարի յեսեվից դիտելիս, պետք է պառկել աջ կողմից, գլուխն զգուշությամբ դուրս հանելով: Յեթե գլուխը թագստոցից վեր բարձ-րացվի, դիտողն ավելի լավ նկատելի կլինի (Նկ. 18):



Նկ. 16

Չողերից պատրաստված ցանկապատի յետևից ա-մենից լավ է դիտել միջնակա՛ն սլան մոտը պառկած դրությամբ և այնպիսի տեղում, ուր կանաչն ավելի խիտ է կամ տեղն անհարթ է (Նկ. 19):



Նկ. 17

Տան տանիքից ավելի ընդարձակ տեսաշրջան է բաց-վում: Սակայն տանիքի վրա տեղավորվելիս, պետք է հիշել, վոր դիտողին նկատելը շատ հեշտ է, յեթե նա

ծայր աստիճան զգուշ չէ: Պետք է զգուշութեամբ դուրս սողալ մինչև կատարը և գլուխը կամաց-կամաց բարձրացնել, դեմքը տանիքի լեռնից դուրս հանելով աչքան, վորքան այդ հարկավոր է տեղանքը ղննելու:



ԾԻՇՏ Ե



ՍԽԱԼ Ե

Նկ. 18

համար (նկ. 20): Ամենից լավ է տեղավորվել ծխնելուղի մոտ, նրա սովերալին կողմում: Դիտողութեան համար տանիքի ընտրութեուն կատարելիս, ավելի



ԾԻՇՏ Ե




ՍԽԱԼ Ե

Նկ. 19

լավ է կանգ առնել աչքալիսի տանիքի վրա, վորի լեռներ ծառեր կան, վորպեսզի կարելի լինի նրանց ֆոնի վրա քողարկվել: Կարելի չէ դիտողութեուն կատարել լսո-

ղական պատուհանից կամ թե դիտելու համար տանիքում ձեղք բաց անել այն տեղին մոտիկ, ուր նա պատի հետ միանում է: Տանիքում ձեղք բաց անելիս, պետք է հիշել, վոր ծղոտածածկ և փայտածածկ տանիքներին ձեղք բաց արված տեղերը յերևում են իբրև սպիտակ կետեր:

Տան պատուհանից կամ դռնից դիտելիս, խուսափեցեք դրանցից մոտիկ կամ ամենալույս տեղում կանգնելուց:



ՍԽԱԼ Ե


ԾԻՇՏ Ե

Նկ. 20

Սենյակի խորքում կանգնելիս, դուք կարող եք նույնպես լավ տեսնել և միևնույն ժամանակ դուք հակառակորդից ձեզ քողարկած կլինեք (նկ. 21):

Այստեղ մենք քննութեան առանք ԴԿ-ը տեղանքում տեղավորելու ամենաբնորոշ դեպքերը: Հիշելով այս լեղանակները, դուք ամեն տեսակի տեղանքում կկարողանաք ձեզ համար հարմար ԴԿ գտնել և դիտողութեուն կատարել:

Դի. ի քողարկումը պետք է սկսեք դեռ այն ժամանակ, չորս դուք մոտենում եք այդ կետին: Ամենից առաջ ձեր վրայից պետք է հանեք և մի կողմ թողնեք այն ամենը, ինչ վոր աշխատանքի ժամանակ ձեզ խանգարելու յե: Դիտողը պետք է իր վրա ունենա միայն այն, ինչ վոր Դի-ում իրեն հարկավոր է, այսինքն՝ հրացանը, փամփշտի պայուսակը, թին, հակագաղը, չերկդիտակը կամ շրջադիտակը (յեթե այդպիսի բաներ նրան տրված են): Իրերի տոպրակը, շինելի կողը, կաթսայիկը և վրանն ավելի լավ է թողնել վաշտում, իսկ յեթե մարտի պայմանները թույլ չեն տա-



Նկ. 21

լիս, դնել Դի-ից մի քանի քալլ հեռու մի ծածուկ տեղ: Պետք է ամբողջ հանդերձանքը դնել յեթե յեթե թարկել, վորպեսզի վոչինչ չփայլի: Դիտարկի շրջիկը և աստղն ավելի լավ է փաթաթել կտորով կամ գլխարկի շրջիկը շուռ տալ դեպի յետ: Հրացանն իր մոտ պահել թագգրած, առանց նրան դուրս ցցելով դեպի առաջ: Դեմքը պետք է պահել ստվերում կամ հող քսել, քանի վոր սպիտակ գույնը հեռվից նկատվում է: Դի-ում պահպանել լիակատար անշարժություն, վորովհետև մենք արդեն գիտենք, վոր կետն ամենից հեշտ կերպով կարելի չե հայտնաբերել շարժումները միջոցով:

Փորձեցեք այսպիսի մի փորձ կատարել: Վորեն տեղում գրավեցեք մի ամենաբաց Դի. դուք կնկատեք, վոր յեթե լիակատար անշարժություն պահպանեք, վորքան մարդ կանցնի ձեր մոտից առանց ձեզ նկատելու:



Նկ. 22

Կարելի չե ոգտվել քողարկ-խալաթներով և հատուկ կորդակներով: Սակայն պետք է միաժամանակ հիշել, վոր միայն դրանք դիտողին չեն ծածկի: Յեթե դրան-



Նկ. 23

ցից հմտորեն չոգտվեն, դրանք ավելի շուտ իրենց մատնել կտան: Քողարկ-խալաթ հագնելիս, պետք է ոգտա-

գործել քողարկման բոլոր միջոցները և նույնպես հարմարվել տեղանքին, ինչպես մենք վերն ասացինք: Քողարկ-խալաթը միայն նպաստում է ել ավելի լավ քողարկվել (նկ. 22, 23, 24, 25):




Նկ. 24

Միմիայն լավ քողարկվելով և ԴԿ-ի հաջող ընտրութուն կատարելով կարելի չէ հանգիստ դիտողութուն կատարել և հակառակորդի մասին իր հրամատարին ճիշտ տեղեկություններ տալ:

V' ԻՆՉՊԵՍ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼ

Բավական չե, վոր դիտողը գիտենա, թե ինչպիսի հատկանիշներով կարելի չէ վորոշել հակառակորդին, թե ինչ պետք է վորոշել մարտադաշտում և ինչպես պետք է ԴԿ ընտրել: Նա պետք է նաև կարողանա



Նկ. 25

դիտել: Նա աշխատում է տեսողությամբ և լսողությամբ: Ինչպես պետք է ավելի լավ ոգտագործել այդ զգայաբանքները, վորպեսզի կարելի լինի ուժերի փոքր լարումով ավելի մեծ արդյունքի հասնել:


Ի՞ր դիտողութեան տակ դիտողն ունի մի վորոշ սեկտոր: Յեթե նա սկսի այդ ամբողջ սեկտորը միանգամից դիտել, նրա ուշադրութեանը կցրվի և նա վռչինչ չի կարող նկատել:

Պետք է վարվել հետևյալ կերպ. սեկտորը բաժանել փոքր տեղամասերի և սկսել նրան դիտել այդ տեղամասերով աշխատել, ինչպես ցույց է տրված 26-րդ նկարում: Սկզբում դիտողը զննութեան է չենթարկում սեկտորի մոտիկ մասը, ապա հաջորդ մասը, մինչև վոր աշխարհով հասնում է ամենահեռու մասին. ահա հետևելով զննութեանը շարունակվում է հակառակ կարգով. ամենահեռու մասից դեպի ամենամոտիկը: Բայ տեղերը դիտվում են ավելի արագ: Փակ տեղերում դիտողի հալացքն ավելի չերկար է կանգ առնում, նա աշխատում է ուշադրութեամբ զննել բոլոր մանրամասնութեանները:

Յեթե դիտողը վորեւ կասկածելի բան է նկատում, աշխատում է ուշադրութեամբ այդ տեղը դիտել:

Փորձեցեք վարվել այսպես: Հեռվում ձեզ համար վորեւ առարկա նկատեցեք և սկսեցեք ուշադրութեամբ նրան դիտել: Դուք կտեսնեք, թե ինչպես աստիճանաբար սկսում են յերևալ այնպիսի մանրամասնութեաններ, վորոնք սկզբից աննկատելի էին: Որինակ՝ դուք նայեցեք առանձին տանը: Աստիճանաբար նրան դիտելով, դուք արդեն կնկատեք մանրամասնութեանները. խողովակից ծուխ է դուրս գալիս, տան մոտերքը նկատում եք ոժանդակ շենքեր, ծառեր: Դիտողութեանը շարունակելով, դուք կարող եք նկատել շարժում, առանձին մարդկանց կերպարաններ, դիտենալ, թե նրանք ինչ են անում և նկատել անասուններին:

Այդ կախված է մանրամասնութեաններն աստի-



Նկ. 26

ճանաբար նկատելու մարդկային աչքի հատուկ առանձնահատկությունից:

Դիտողը պետք է դիտենա այդ առանձնահատկությունը և մարտադաշտի դիտողության ժամանակ կարողանա դրանից ոգտվել: Որինակ, դիտողը նկատում է, թե ինչպես առվի մեջ մի ինչ վոր բան փալատակում է: Դա հակառակորդի մարտիկի թիկունքն է: Դիտողն առանց նրան իր տեսողությունից կորցնելու, աշխատում է ավելի մանրամասն դիտել: Զինվորը դուրս է սողում մի ավելի բաց տեղ: Դուք նկատում եք, վոր նա իր հետ ինչ վոր տուփ է տանում: Իսկույն կասկած ե առաջանում՝ փամփշտակիր է: Շարունակում ենք նրան հետևել: Նա մոտեցավ մացառուտին և անհետացավ: Մենք սկսում ենք մացառուտն ուսումնասիրել և մանրամասն դնել: Սկզբում մենք վոչինչ չենք նկատում, հետո մեզ հաջողվում է նկատել, վոր մացառուտը չերբեմն-չերբեմն մի տեղում մի այլ տեսակ է շարժվում, քան չեթե դա քամուց շարժվելիս լինել: Սկսում ենք մացառուտի այդ փոքրիկ մասը դիտել և նկատում ենք մի քիչ ծուխ: Ուշադրությամբ նայում ենք այդ տեղին, և աստիճանաբար մեր աչքերի առաջ լերկում է հաստոցավոր գնդացիր: Մենք նկատում ենք համարների գլուխները, տեսնում ենք գնդացրի բունը: Գնդացիրը հայտնաբերված է: Մենք անցնում ենք տեղանքի հետագա դնությունը:

Այսպիսով մեր քալ առ քալ ուսումնասիրում ենք տեղանքը, մենք մեկը մյուսի հետևից նշան ենք հայտնաբերում:

Գտնված նշանները մենք չենք թողնում: Մենք ժամանակ առ ժամանակ կրկին դառնում ենք դեպի

նրանց, վորպեսզի համոզվենք, վոր նրանք իրենց դիրքը չեն փոխել:

Պարզ է, վոր դիտողի ուշադրությունը ծալք աստիճան լարված է: Նա աստիճանաբար հոգնում է և նրա ուշադրությունը ցրվում է: Հենց այս հանգամանքն էլ հարկադրում է խաղաղ ժամանակ դիտողներ պատրաստել և տեական վարժությամբ նրանց ուշադրությունն ամրապնդել, վորպեսզի ընդունակություն ունենան չերկար ժամանակ ուշադրությամբ դիտելու:

Սովորաբար պոստում նշանակվում են 2 դիտող: Նայած զանազան պայմաններին (տեղանքի բնույթին, պատրաստված դիտողների առկայությունը, դիտելու աշխատանքի դժվարությունը, չեղանակին և այլն) նրանց ծառայության ժամանակը կարող է տատանվել դեպի ավելի կամ պակասի կողմը: Միջին հաշվով ընդունվում է, վոր 2 դիտողը մեկ ԴԿ-ին կարող են սպասարկել 2-4 ժամվա ընթացքում: ԴԿ-ում նրանք հերթով փոխվում են: Առհասարակ ժամկետը, վորի ընթացքում դիտողը կարող է դիտողություն կատարել, 30 րոպեն է, վորից հետո դիտում է չերկրորդ դիտողը: Այսպես, մեկը մյուսին փոխելով, նրանք անընդհատ դիտում են:

Սակայն յեթե նրանցից մեկը շարքից դուրս է գալիս, վիրավորվում կամ սպանվում է, մյուսը պարտավոր է, ինչ գնով ել վոր լինի, նրան փոխարինել և մինչև վերջին շունչն առանց փոխվելու դիտել կամ մինչև վոր նրան փոխարինող կգա:

Վերևում ասվեց, վոր դիտելու հմտությունը միանգամից չի տրվում: Հարկավոր է չերկարատև վարժություն կատարել: Այդ պատճառով, յուրաքանչյուր

մարտիկ խաղաղ ժամանակ պետք է իրեն վարժեցնի զինվորական և «աչքերով մարտ մղելու» մեջ:

Կարելի չէ հանձնարարել այսպիսի մի յեղանակ. դաշտը պարապմունքի դուրս գալիս շարժվելու ճանապարհին զինել տեղանքը, աշխատելով նրա բոլոր մանրամասնությունները զիտել: Յետ դառնալիս իրեն ստուգել, թե վորքան ճշտությամբ են զիտված այդ մանրամասնությունները: Այդ աշխատանքը կարելի չէ անցկացնել անհատական խմբական մրցակցության կարգով:

VI ԻՆՉՊԵՍ ԶԵԿՈՒՑԱԳԻՐԵՐ ԿԱԶՄԵԼ ՅԵՎ ՀԱՆՁՆԵԼ ՇՐԱՄԱՏԱՐԻՆ. ԴԿ-Ի ՈՐԱԳԻՐԸ

Դիտողի աշխատանքը միմիայն այն ժամանակ է լիովին արժեքավոր դառնում, յերբ հրամատարը նրա զիտողությունների արդյունքն անում և կարողանում է ոգտագործել: Հետևապես դիտողը պետք է իր զիտողությունների արդյունքը մի կերպ հայտնի հրամատարին:

Նա այդ արդյունքը հաղորդում է ղեկուցադրերով: Նա անմիջապես հաղորդում է, հենց վոր հակառակորդին յերևան է բերում: Դիտողի ղեկուցադիրը պետք է լինի ճիշտ, պարզ և հակիրճ:

Պետք է հաղորդել միմիայն այն մասին, ինչ վոր տեսել և պարզել է: Յեթե հաստոցավոր գնդացի է տեսել, պետք է հաղորդի. «Տեսնում եմ հաստոցավոր գնդացի զիրքում (կամ շարժվելիս)». յեթե տեսել է, վոր հակառակորդի սպան վաղեվադք է կատարել, պետք է հաղորդի. «Դեպի առանձին ծառը վաղեց հակա-

ռակորդի սպան»: Յեթե մացառուտում վորեւ շարժում էս տեսնում, սակայն դեռևս չես կարողանում վորոշել, թե այդ ինչ բան է, հաղորդիր. «Թփուտում նկատել եմ շարժում», և ինքդ շարունակիր զիտել:

Վորպեսզի հրամատարը միանգամից կարողանա հասկանալ, թե հակառակորդը վորտեղ է գտնվում, ղեկուցադրի մեջ պետք է մատնանշել ճիշտ տեղը: Սովորաբար հայտնաբերված հակառակորդի տեղը վորոշվում է ցույց է տրվում կապելով նրան տեղական վորեվի լավ յերևացող առարկայի հետ, որինակ՝ առանձին տան, ծառի, ճանապարհների ցուցիչի, սյան հետ և այլն: Այդ տեղական առարկաները կոչվում են կողմորոշներ և համարակալվում են: Որինակ. առանձին ծառ—կողմորոշ 1, տուն կողմորոշ 2 և այլն: Հասկանալի լինելու համար պետք է մատնանշել, վոր հակառակորդը գտնվում է տեղական առարկայից աջ կամ ձախ, վերև կամ ներքև և վորոշել հեռավորությունը:

Հեռավորությունները ցույց տալու համար գործադրվում են հետևյալ յեղանակները: Հեռավորությունը չափում են լուցիկ տուփով, փամփուշտի պահունակով կամ մատների հաստությամբ և յերկդիտակի ցանցով. տուփը կամ պահունակը բռնած ձեռքը մեկնում են կիսածաված դրությամբ. նրա մեկ յեղը համատեղվում է տեղական առարկայի հետ, իսկ մյուսը՝ նշանի հետ: Լուցիկ տուփը կարող է շուռ տրվել յերկարությամբ, հաստությամբ և լայնությամբ: Հեռավորությունը չափելուց հետո, դիտողը հաղորդում է մոտավորապես այսպես. «Առանձին ծառից դեպի աջ, լուցիկ տուփի յերկարության հեռավորությամբ զիրքում կա հաստոցավոր գնդացի» (նկ. 27):

Այդպես կարելի չե հեռավորությունը չափել նաև փամփուշտների պահուստի լերկարությամբ ելաչնությամբ: Միայն թե արև որին պահուստակով ոգտվել չի կարելի. նա իր փալլով կարող է հակառակորդի ուշադրությունը գրավել:

Յեթե լուցկու տուփ չկա, կարելի չե ոգտվի մատներով: Ձեռքը մեկնում են նշանի ուղղությամբ: Ձեռքի դաստակը բարձրացնում են դեպի վեր: Մատների կողքը մոտեցնում են առարկայի յեզրին և նկատում են, թե քանի մատ է տեղավորվում տեղական առարկայի և նշանի միջև: Հենց մատների այդ թիվը ել դիտողն իր զեկուցագրի մեջ ցույց է տալիս: Որինակ. «Քարից դեպի աջ կա արկից առաջացած 2 մատ լայնությամբ ձախար, իսկ ձախարում՝ թեթև գնդացիք»: Առավել ևս լավ է, յեթե դիտողը նշանի տեղը կողմորոշում է «հազարերորդականներով»¹⁾: Դրա համար հարկավոր է հիշել, վոր մատների լայնությունը հավասար է 30 հազարերորդականի, յերկդիտակի փոքրը բաժանումը՝ 5 հազարերորդականի, մեծ բաժանումը՝ 10 հազարերորդականի և այլն: Այդ դեպքում նշանը ցույց է տրվում այսպես. «Կողմորոշ 1,0—30 դեպի աջ—գնդացրային բուն է»:

Յեթե ժամանակը թույլ է տալիս, վաշտի հրամատարը դիտող ուղարկելիս նրա համար գծում է տեղանքի սխեման: Այդ սխեմայում նա գծում է տեղական բոլոր կողմորոշ—առարկաները, համապատասխան համարներով նրանց համարակալելով: Այդ արվում է

1) «Հազարերորդականը» այն անկյունն է, վորը կազմում է շրջանագծի $\frac{1}{6000}$ մասը: Գործ է ածվում անկյունները չափելու համար իբրև չափ (այնպես, ինչպես «աստիճանացույցը»)


նրա համար, վորպեսզի դիտողի համար հեշտ լինի զեկուցագրի մեջ մատնանշել, թե ինչ առարկայի մասերքն է գտնվում նշանը:

Դիտողը հաղորդում է. «Դեպի 4 կողմորոշը 0—60 դեպի ձախ (2 մատ կամ յերկդիտակի 6 մեծ բաժանում) գտնվում է հակատանկային հրանոթ»:

Հրամատարն իր սխեմայով լմանում է կողմորոշների համարակալությունը: Նա տեղանքում գտնում է հարկավոր կողմորոշները, յերկդիտակով չափում է 0—60 դեպի ձախ (կամ 2 մատ դեպի ձախ) և վորոշում է



Նկ. 27




Նկ. 28

մատնանշված նշանը: Վաչրի համատեսարանը (պանորամը) և նրանից հանված կողմորոշ սխեման ցույց են տրված 29-րդ նկարում:

Սխեմայով ոգտվելը հեշտացնում է զեկուցագրեր կազմելը: Նաչեցեք, որինակ, 30-րդ նկարը. դիտողը կամենում է առանձին ծառով կողմորոշել նշանը. նա պետք է նախ ասի, թե վորտեղ է կանգնած այդ ծառը,

վորովհետև կան շատ ծառեր, հարկավոր է չերկար բացատրություն տալ իսկ սխեման ունենալով ուղղակի ասում է. «Կողմորոշ 5», և հրամատարն իսկույն հասկանում է, վոր խոսքը վերաբերում է այն ծառին, վորն անվանված է 5 նշան:



Նկ. 29

30-րդ նկարում ցույց են տրված հակառակորդի մի քանի որսկետները: Փորձեցե՛ք դրանց գտնել և, սխե-

մայից ոգտվելով, ձեր հրամատարի համար ղեկուցադիր կադմել:

Մենք քննեցինք այն հարցը, թե դիտողն ինչպես է ղեկուցադրեր կադմում: Այժմ չեկե՛ք խոսե՛ք այն մասին, թե նա ինչպես է այդ ղեկուցադրերը հաղորդում:

Իբրև կանոն, ղեկուցադրերը հաղորդում են բանավոր կերպով: Ամենակարևորն այն է, վոր ղեկուցադրերը հրամատարին հաղորդվե՛ն, վորքան կարելի չէ, ավելի շուտ:

Թե ինչ չեղանակով պետք է ղեկուցադրերը հաղորդել, վորոշում է հրամատարը:


Սակայն դիտողն ինքը շահագրգռված է, վոր իր ղեկուցադիրը, վորքան կարելի չէ, ավելի շուտ ու ճշտորեն հաղորդվի հրամատարին, և նա ինքը պետք է հետևի կապի աշխատանքին:

Յեթե դիտողի տեղը հրամատարի տեղից հեռու չի տեղավորված, կարող է իր դիտողությունները հրամատարին հաղորդել ձայնով: Հրամատարը ղեկուցադիրն ընդունելիս, կրկնում է, և ղեկուցադիր կրկնելը դիտողի համար հանդիսանում է իբրև չեղաշիջի, վոր ղեկուցադիրը ճիշտ է ընդունված:

Յեթե դիտողը մեծ հեռավորություն վրա չէ գտնվում, կարելի չէ դնել միջանկյալ պոստ: Այդ պոստի կարմիր բանակայինը դիտողի ղեկուցադիրն ընդունում և ձայնով հաղորդում է նրա հրամատարին: Դիտողը լսում է, թե կապավորն ինչպես է ղեկուցադիրը հաղորդում հրամատարին, և համոզվում է, վոր ղեկուցադիրը ճիշտ է հաղորդված:

Յերբ Դկ-ն հրամատարից բավական հեռու չէ գտնվում, դեպի դիտողը կարելի չէ հեռախոս անցկաց-

ներ, Հեռախոսիչը տեղավորվում է ԴԿ-ի լեռների կողմից քիչ հեռու մի ծածուկ տեղում, սակայն այնպիսի հե-



Նկ. 30

ռավորութեամբ, վորպեսզի կարողանա դիտողին լսել: Դիտողն իր դիտողութեանները հաղորդում է հեռախոսիչին, իսկ հեռախոսիչը դրանց հաղորդում է հեռախոսով: Վորոշ դեպքերում, որինակ հեռախոսիչի վերավորվելու գեպքում, դիտողը պետք է կարողանա ապարատը տեղափոխել ԴԿ-ն և ինքն իր դիտողութեանները հեռախոսով հաղորդել:

Ամենից հաճախ հեռախոսը գործադրվում է այն ԴԿ-րում, վորոնք նշանակվում են գումարտակի կամ նույնիսկ գնդի շտաբի կողմից: Վաշտի ԴԿ-երում հեռախոս շատ քիչ է հանդիպում: Վաշտի ԴԿ-երում կապը հաճախ պահպանվում է լրատարներով:


Այդ կապը կազմակերպվում է հետևյալ ձևով: Լրատարների մի ողակ տեղավորվում է ԴԿ-ին մոտիկ, այնպիսի մի տեղում, վորը նրանց լավ քողարկի և շարժվելու գաղտնի ճանապարհներ ունենա դեպի հրամատարի տեղը: Լրատարների կազմից մեկը նշանակվում է իբրև ավագ: Սրա պարտականութունն է լսել դիտողի հաղորդած զեկուցագրերը, գրի առնել նրանց, հաղորդածը գիտողին կրկնել (ճիշտ լինելն ստուգելու համար) և հերթական լրատարի միջոցով ուղարկել հրամատարին:

Յեւ վորովհետև մարտի ժամանակ լրատարը յնթակա չէ մեծ ռիսկի, իսկ մյուս կողմից դիտողի մոտ ընդամենը 2-3 լրատար մարդ կա, զեկուցագրերն ուղարկվում են վորոշ ժամանակ անցնելուց հետո: Դիտողն ինքը պետք է մատնանշի ավագ լրատարին, թե չերբ պետք է զեկուցագիրն ուղարկել: Նա այստեղ չենում է այն նկատառումներից, թե վորքան կարևոր են իր ձեռք բերած տեղեկութեանները: Յեթե տեղե-

կուլթուրները մեծ կարևորություն չեն ներկայացնում, ավագ լրատարը նրանց արձանագրում է ընդհանուր զեկուցագրի մեջ: Կարևոր տեղեկություններն անմիջապես ուղարկվում են հրամատարին:

Դուք տեսաք, վոր դիտողն ինքը զեկուցագրերը չի գրում: Այդ ալն պատճառով, վոր չեթե նա ինքը գրի, լրատարները պետք է սողալով գան նրա մոտ դեպի դիտակետը և զեկուցագրերն առնեն ու յետ գնան: Իսկ մենք գիտենք, վոր վոչ մի բան ալնպես քողարկահան չի անում Դի-ը, ինչպես շարժումը:

Վորոշ զեպքերում շտապ զեկուցագրերը հաղորդե-



Նկ. 31

լու համար սահմանվում են ազդանշաններ: Այդ ազդանշաններով կարելի չե հաղորդել միմիայն ընդհանուր տեղեկություններ, ինչպես որինակ, տանկերի գրոհը, հակառակորդը գրավել է այս ինչ ընագիծը, հակառակորդը նետվել է ընդհանուր գրոհի կամ թե գրոհի այսինչ տեղամասում: Ազդանշանները լինում են ձայնական, հրթիռով և գրողակներով: Այդ ազդանշան-

ները տալիս է վոչ թե դիտողը, ալ այդ նպատակի համար նշանակված մարտիկը, ըստ վորում ազդանշանը հաղորդելու տեղն ընտրվում է ԴԿ-ի մոտերքում: Ազդանշանը հաղորդելու ժամանակը նշանակում է դիտողը:

Փոխվելուց հետո դիտողը պետք է մանրամասն կերպով իր հրամատարին զեկուցի ալն ամենի մասին, ինչ վոր ԴԿ-ում յեղած ամբողջ ժամանակամիջոցում դիտելի չե: Առանձնապես այդ կարևոր է պաշտպանվող հակառակորդին հետախուզելու ժամանակ, յերբ մենք հետախուզում ենք նրա պաշտպանողական սխտեմը, վորպեսզի մյուս զորամասերով այդ սխտեմը ձեղքենք: Դրա համար դիտողը պահում է ԴԿ-ի որագիր: Որագրում պետք է արձանագրվի՝ թե յերբ, վոր տեղ և ինչ է հայտնաբերված:

Վորպեսզի արձանագրելը հեշտ լինի, ԴԿ-ի որագիրը նախապես գծվում է հետևյալ ձևով:

ԴԿ-ի որագիր 2: Նշանների տեսադաշտի սեկտոր № 17 և 20: Կետի տեղն է՝ 115,4 բարձունքի արևմտյան լանջը:

Դիտողութ. ժամանակը		Վորտեղ և հայտնաբերված	Ինչ է հայտնաբերված
Ժամ	Բույն		
10	25	Բանջարանոցի հյուսիսային անկյունը 7 կողմորոշի մոտ	Հաստոցավոր դնդաղի խրամատ
10	32	3-րդ և 8-րդ կողմորոշների միջև:	Ցածր լարափակոց
10	45	Կողմորոշ 2-ից 0-80 դեպի աջ:	Գնդակոծման համար մաքրված տեղ թփուտի մեջ:

Դիտող ջոկի հրամատար Պոզդնյակով:

Այս ձևով հեշտ և հասկանալի, թե ինչպես և լրաց-
վում որագիւրը: Մասնավոր դրանցումը կատարված և
30-րդ նկարի պլանի համեմատ:

Նկատել ունենալով, վոր սպիտակ թուղթը հեռվից
յերևում և, մասնավանդ չերը քամին նրան դեռ ու դեն
և շարժում, դիտողը պետք և մտածի աչն մասին, թե
ինչպես պատրաստի իր որագիւրը, նկատելի չլինի և
հարմար լինի ԴԿ-ում նրանով ոգտվել: Պատրաստել
նրան տետրակի ձևով՝ անհարմար և. քամին նրա
թերթերը շուռ ու մուռ կտա և նկատելի կլինի Կա-
րելի յե անել այսպես. վերցնել մի լերկար թերթ
սպիտակ թուղթ և որագիւր ձևով նրան գծել: Լավ կը
լինի, յեթե թուղթը նեղ լինի, մոտավորապես գրելու
թերթի կեսի չափ: Վերցնել մի կտոր ստվարաթուղթ
կամ բարակ տախտակ և պատրաստել մի ուղղանկյու-
նանի՝ թղթի լայնության չափով, իսկ լերկարությունը
լայնությունից մի փոքր ավելի: Այդ ստվարաթուղթը
պատել թղթով, ինչպես ցուց և տրված 31 նկարում:
Թուղթը պետք և թելով կապել, թելից կապել մատիտ,
և անա դիտողի լերթային գրասենյակը պատրաստ և:
Մի խորհուրդ ևս. մատիտը շատ սուր մի արեք, նա
կարող և հեշտությամբ կտորվել, իսկ ԴԿ-ում մատիտը
պետք և զգուշությամբ սրել, վորովհետև դանակը, ա-
րևից փայլելով, կարող և մեղ հեշտությամբ նկատելի
դարձնել: Դեպի դիտակետը շարժվելիս, այդ պլանշետը
թաղցրեք բլուղի տակ. ավելի քիչ կնկատվի և չի ջնջվի:
Դիտակետը գալուց հետո պլանշետը դրեք ձեր մոտ և
կարող եք գրել:

Ինչպես և կադմում գրողն իր զեկուցագրերը: Սովոր-
աբար, յեթե ԴԿ-ում 2 դիտող կա, ամեն մեկն իր


համար մի որագիւր և պատրաստում: Յերբ առաջին
դիտողն և դիտում, յերկրորդը գրի յե առնում նրա
դիտողությունները, յերբ յերկրորդն և դիտում, գրի
յե առնում առաջինը: Որագիւրը ԴԿ-ում նրանք միմյանց
չեն տալիս, այլ յուրաքանչյուրը գրում և այն որագիւրի
մեջ, վորն իր ձեռքում կա: Յերբ նրանք ԴԿ-ից հեռա-
նում են, կատարում են որագիւրների փոխանակություն.
այդպիսով յուրաքանչյուրի ձեռքում լինում և իր դի-
տողությունների գրանցումը: Դիտողության արդյունք-
ները բոլոր կետերից կհնարոնանում են շտաբներում,
ուր այդ բոլորը ուշիուշով մշակման են յենթարկվում:
Շատ հաճախ վաշտային դիտողների առանձին տվյալ-
ները միմյանց հետ համեմատելով, շտաբները հակա-
ռակորդի մասին իմանում են շատ կարևոր տեղեկու-
թյուններ, վորոնք վոչ միայն հակառակորդի տեղավո-
րությունն են հայտնաբերում, այլև յերեմին նրա առա-
ջիկա գործողությունների պլանը: Այստեղից ել դիտո-
ղության համար մի հետեւություն. հակառակորդի մոտ
նկատած վոչ մի բան աչքաթող չանել: Անցկացրու
որագիւրի մեջ, յերեմին մանր թվացող յուրաքանչյուր
բան հանդիսանում և իրեն չափազանց արժեքավոր մի
տեղեկություն:

VII ԻՆՉՊԵՍ ՈՒՏՎԵԼ ԴԻՏՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐՈՎ

Մենք ունենալու չենք փոքր չափի դիտողության
նշաններ, վորոնց հասարակ աչքով տեսնելը բավական
դժվար և: Այստեղ դիտողությանն ոգնության և հաս-
նում տեսնելիկան: Կան դիտողության հատուկ գործիք-

ներ. դրանք են՝ յերկդիտակը, տեղեկդիտակը և շրջադիտակը (պերիսկոպը):

Յերկդիտակը կազմված է միմյանց ամրացված յերկու փոքրիկ խողովակներից: Շնորհիվ խողովակներից ապակիների բարդ սխեմային, յերկդիտակն ընդունակ է, յերբ նրանով նայում են, առանձին առարկաները մեծացնել, ավելի ճիշտ կլինի ասել՝ մոտեցնել: Յեվ վորովհետև տարբեր մարդիկ տարբեր տեսողություն ունեն, այդ պատճառով ել բոլորը միատեսակ չեն տեսնում: Վրանց համար առարկաների պատկերացումը պարզ է, իսկ վրանց համար խավար է և ցրված: Սակալն այդ թերությունը վերացնելը հնչու է: Յերկդիտակի ապակիները պտտվում են, և աստիճանաբար նրանց




Նկ. 32

պտտելով, կարելի է յերկդիտակը աչքերին հարմարացնել այնպես, վոր ամեն տեսակի տեսողության դեպքում մարդը կարողանա առարկայի պարզ պատկերացում տեսնել: Միմիայն հարկավոր է հիշել, թե ակնապակու սպիտակ խաղը ինչ թվերի դիմաց է ընկնում: Այդ դեպքում կարելի է իսկույն և յեթ ամեն տեսակի յերկդիտակ դնել այդ թվի վրա, և դուք կաողդ եք ազատ կերպով տեսնել: (Նկ. 32)

Յերկդիտակով նայելիս, նրա ներսում լիազեր են յերևում: Դրանք նշանը ցույց տալու բաժանումներն են: Յուրաքանչյուր փոքր բաժանում հավասար է հինգ հազարերորդականի (0—05), չուրաքանչյուր մեծ բաժանում՝ տաս հազարերորդականի (0—10):

Յերկդիտակով կանգնած դրությամբ դիտելու համար պետք է նրան բռնել յերկու ձեռքով, արմունկներն ավուր սեղմել մարմնին, աչքպես ձեռքերի դողդողցը կանցնի յերկդիտակին, իսկ դողդողացող յերկդիտակով վատ է յերևում:



Նկ. 33

Յեթե դուք յերկդիտակով դիտում եք պակած դուրս թլամբ, պետք է արմունկները հենեք դետնին:

Տեղանքը դնելու կարգն ու նշանները վորոշելու յեղանակը նույնն է, ինչ վոր հասարակ աչքով:

Յեթե յերկդիտակով յերկար եք նայում, աչքն ավելի շուտ է հոգնում: Այդ պատճառով ել ավելի լավ է դիտել հասարակ աչքով, իսկ յեթե հարկավոր է վորեւ բան ավելի լավ տեսնել, պետք է ոգտվել յերկ-

դիտակով: Յերբ լավ տեսաք, նորից շարունակեցեք աչքերով դիտել:

Լավ հիշեցեք, վոր չերկդիտակով անդգուշ կերպով ոգտվելու դեպքում, նա կարող է ձեզ հեշտությամբ



Նկ. 34

մատենել հակառակորդին: Առանձնապես վտանգավոր է ապակիների փայլելն արև ժամանակ: Արև որը յերկ-

դիտակով նայելիս, պետք է նախապես վարվել այնպես: Պետք է վերցնել 3—4 ամ լայնությամբ սև թղթի մի շերտ և նրանից պատրաստել խողովակ և հագցնել յերկդիտակի ապակիների ագուցարանին: Այս հարմարանքը կոչվում է արևի մթնացուցիչ: Այդ այն հետևանքն է ունենում, վոր արևի ճառագայթներն ապակիներից չեն անդրադառնում և փայլ չեն առաջացնում (նկ. 33):


Ստերեոդիսակը (նկ. 34) դործ է անվում գլխավորապես հրետանային ԴԿ-ում: Նա կազմված է յերկու հեռադիտակից և յեռոտանուց: Ստերեոդիտակով ոգտվելու համար հարկավոր է նայել ակնապակիների միջով, խողովակների վերին ապակիները (առարկայական ապակիների պատուհանները) ուղղելով դիտվելիք առարկայի կողմը: Ակնապակիները հարմարեցնում են աչքերին այնպես, ինչպես յերկդիտակի ակնապակիները:

Ստերեոդիտակը հարմար է նրանով, վոր դրանով ոգտվել կարելի չէ թաղստոցի (խրամատի, առվի, թմրի և պատի) յետևից դիտելու համար: Այդ դեպքում նրան այնպես պետք է դնել, վոր վերևի ապակիները թաղստոցի կատարի յետևից հազիվ չեբևան: Մյուս բոլոր մասերը թաղստոցի յետևում ծածկվում են:

Ստերեոդիտակն անհարմար է նրանով, վոր պահանջվում է նրան դնել յեռոտանու կամ հատուկ հաստարանի վրա (առանց դրան դիտել չի կարելի), խոշոր է և ծանր, այնպես վոր նրան չի կարելի ամհն տեսակի ԴԿ-ում դնել:

Շրջալիսակը (պերիսկոպը) (նկ. 35) նրա համար է, վոր ծածկարանի յետևում թաղնված դիտողը կարողանա դիտել, առանց գլուխը դուրս հանելու: Շրջալի-

տակը կաղձված և մետաղե խողովակից, վորի մեջ
դրված են մի քանի հայելի կամ պրիզմա: Շրջադի-
տակը յերկդիտակի նման պատկերացումը մեծացնում
և մի քանի անգամ: Դիտողը շրջադիտակի վերեւի
մասը թափստոցի կատարի յետեից դուրս և հանում



Նկ. 35

և ակնապակով նայում և Շրջադիտակով ոգտվելիս,
պետք և ուշադրութուն դարձնել, վոր ապակիները
կեղտոտ չլինեն, ալլապես ստացվում խավար պատկե-
րացում:

Բացի նկարագրած ոպտիկական շրջադիտակից, չեք-
րեմն ալլապիսին չլինելու դեպքում, կարելի և գործա-
ծել հայելալիւ շրջադիտակ, վորն իր կաղձությամբ
շատ պարզ և և վորով դիտողութունը կատարում և
այնպես, ինչպես ոպտիկական շրջադիտակով:

Նորից ենք կրկնում, վոր, դիտելու գործիքներով
ոգտվելիս, անհրաժեշտ և ծայր աստիճան զգուշ լի-
նել, վորովհետեւ բոլոր գործիքներն ել ապակիներ ու-
նեն, վորոնք ընդունակ են վառ փայլելու ածալես,
ինչպես կարող և վառ փայլել ապակու փոքրիկ կտորը,
վորն ահագին հեռավորութունից իր վրա ուշադրու-
թյուն և գրավում:

VIII ԻՆՉ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՊԵՏՔ Ե ՈՒՏՎԱԾ ԼԻՆԻ ԴԻՏՈՂԸ

Այժմ դուք տեսնում եք, թե մարտի ժամանակ ինչ-
պիսի դժվարին և պատասխանատու խնդիր և գրվում
դիտողի վրա:

Այդ խնդիրը պահանջում և, վորպեսզի դիտողը՝

ա) լինի հեռատես և ուշադիր, նրա ուշադրութուն-
նից վոչ մի մասը բան չվրիպի, ընդունակ լինի քայլ
առ քայլ գուշակելու հակառակորդի տեղավորութունը.

բ) լավ գիտենա հակառակորդի տեխնիկան և տակ-
տիկան, կարողանա առանձին հատկանիշներով գտնել
նշանները. գիտենա, թե զանազան նշաններն ինչպե՞ս
են չերևում մարտադաշտում.

գ) կարողանա իր համար հարմար ԴԻ ընտրել, գի-
տենա քողարկման կանոնները, կարողանա ոգտվել
դիտողության գործիքներով:

դ) կարողանա վոչ միայն դիտել, այլև ճիշտ և պարզ կերպով հաղորդել հրամատարին դիտողության արդյունքը:

ե) լինի անվեհեր և սառնարյուն, ընդունակ լինի ծանր հանգամանքներում, վտանգավոր ՊԿ-ում դիտողություն կատարելու:

Իզուր կլինի կարծել, թե պետք է դիտող ծնվել: Ինչպես վոր չեն ծնվում իբրև հրաձիգներ, հեծելակներ, հրետավորներ, այնպես էլ չեն ծնվում իբրև դիտողներ:

Յուրաքանչյուր մարտիկ կարող է սխտեմատիկ պարապմունքների և համապատասխան վարժության միջոցով տիրապետել դիտողության արվեստին, սովորել «աչքերով մարտ» մղել, ինչպես վոր տիրապետում են հրացանով և գնդացրով մարտ մղելու արվեստին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I Ինչի համար է մարտում դիտող նշանակվում և ինչպես է կողմակերպվում դիտողության ծառայությունը	5
II Ինչ պետք է տեսնել մարտում	9
III Ինչ հատկանիշներով կարելի չե վորոշել գործառններն ու հակառակորդի գործողությունները	12
IV Ինչպես ընտրել, պատրաստել և քողարկել դիտակետը	14
V Ինչպես դիտողություն կատարել	37
VI Ինչպես գեկուցադրել կազմել և հանձնել հրամատարին. ՊԿ-ի որագիրը	42
VII Ինչպես ոգտվել դիտողության գործիքներով	53
VIII Ինչ հատկություններով պետք է ունենա լինի դիտողը	59



<< Ազգային գրադարան



NL0270969

13 216